ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1962 Общественные науки

# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

## ВОПРОСЫ ФИЛОСОФИИ

Ամսագրի № 7-ը բացվում է Ի. Պ. Ցամերյանի՝ «ՍՄԿԿ Ծրագիրը և աթեիստական դաստիարակության խնդիրները» հոդվածով: Նրանում հեղինակը ընթերցողի ուշադրությունը հրավիրում է կոմունիզմի կառուցման ամենակարևորագույն հարցերից մեկի՝ նոր մարդու ձևավորման խնդրի վրա:

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի կառուցումը և սոցիալիստական հասարակական հարաբերությունների վերափոխումը կոմունիստականի, ստեղծում են բոլոր օբյեկտիվ նախապայմանները կոմունիստական հասարակարգի մարդու ձևավորման համար: Բայց կոմունիստական գիտակցականության ձևավորումը չի կարող տեղի ունենալ տարերայնորեն: Նոր մարդու ձևավորման գործում մեծ դեր է խաղում իդեոլոգիական աշխատանքը, մասսաների կոմունիստական դաստիարակությունը, մարդկանց գիտակցության ու վարքի մեջ հին բոլոր մնացորդների հաղթահարումը: Իսկ այդ մնացորդներից ամենամասսայականը կրոնական վերապրուկներն են, որոնց վերացման միակ ուղին մասսաների գիտա-աթեիստական դաստիարակությունն է:

Մեր երկրում մասնավոր սեփականատիրության վերացման հետ միասին վերացել են նաև կրոնի հենարանը կազմող սոցիալական բոլոր ատրիբուտները: Եվ եթե այսօր կրոնը մեր հասարակության նույնիսկ մի փոքր մասի մեջ պահպանում է իր թույլ, հարհատող գոյությունը, ապա դա հետևանք է այն բանի, որ մեզ մոտ անգրագիտությունը իսպառ չի վերացված և թույլ է աթեիզմի պրոպագանդումը: Կրոնի ազդեցությունը լրիվ վերացնելու համար, գրում է հեղինակը, պետք է անգրագիտությունը վերացնել ամբողջությամբ, բարձրացնել մարդկանց կրթա-գիտական մակարդակը, ստեղծել աշխատավորության դաստիարակության գիտա-աթեիստական խոր մտածված ու կայուն սիստեմ, կոորդինացնել բուհերի, դպրոցների, տեխնիկումների և ամբողջ կրթական սիստեմի ու պրոպագանդայով զբաղվող հիմնարկների այդ ուղղությամբ կատարվող աշխատանքը, բարձրացնել աթեիստական գրականության գիտական մակարդակը:

«Աթեիզմի բնագավառում գիտական աշխատանքի ուժեղացումն ու բարելավումը գլխավոր պայմաններից մեկն է՝ կրոնական նախապաշարմունքների մնացորդների լրիվ հաղթահարման գործում,— այսպես է եզրափակվում այդ հոդվածը:

Ամսագիրը հրատարակել է Ա. Պ. Շեպտուլինի՝ «Արտադրողական ուժերի բնույթի վրա արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքի ազդեցության մի քանի հարցեր» հոդվածը: Արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի համապատասխանության օրենքը բնութագրելով որպես հասարակական զարգացման օրինաչափ պատմական պրոցես, հեղինակը քննարկում է այդ հարցի այն մոմենտը, երբ արտադրական հարաբերությունները իրենց զարգացման աստիճանով չեն համապատասխանում արտադրողական ուժերի զարգացմանը: Այսպես և, օրինակ, սոցիալիստական լագերի այն երկրներում (Չինաստան, Վիետնամ և այլն), որտեղ ֆեոդալական կացութաձևից երկիրն անցել է սոցիալիստականի, առանց կապիտալիստական հարաբերություններ ապրելու: Այդ դեպքում ինչպե՞ս է իրեն դրսևորում «համապատասխանության օրենքը»: Հեղինակը ցույց է տալիս, որ չնայած որոշ առանձնահատկությունների, այդ օրենքը այս դեպքում էլ լրիվ պահպանում է իր ուժը: Պրիմիտիվ, երբեմն տնայնագործական տեխնիկայի վրա հենված երկրներում, որոնք մտել են սոցիալիզմի ուղին, կողմերի հավասարակշռություն է ստեղծվում ուժեղ զարգացած սոցիալիստական երկրների տնտեսական բազմակողմանի օգնության միջոցով: Առաջավոր արտադրական հարաբերությունները, հիմք ունենալով այդ օգնությունը, կարճ ժամանակում արտադրողական ուժերի հնարավորություն են ստեղծում զարգանալու և համապատասխանություն ստեղծելու արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի միջև:

Գ. Մ. Շտրակսը հանդես է եկել «Հասարակական զարգացման հակասությունների առանձնահատկությունների մասին» հոդվածով։ Նրանում հեղինակը քննարկում է հասարակական հակասությունների մի քանի յուրահատուկ մոմենտներ՝ դրանք համեմատելով և հակադրելով բնության մեջ գոյություն ունեցող հակասություններին, ինչպես և քննարկում է սոցիալիզմի հակասությունների առանձնահատկությունները՝ դրանք համեմատելով նախասոցիալիստական էպոխաների հակասությունների հետ։ Հակասությունները նա բաժանում է երկու խմբի՝ ներքին ու արտաքին և անտագոնիստական ու ոչ անտագոնիստական։ Առաջին խմբի հակասությունները հատուկ են բնության իրերին ու երևույթներին, իսկ երկրորդ խմբինը՝ հասարակական զարգացմանը։ Առաջինները պայմանավորված են մեկը մյուսով, լրացնում, ընդհանրացնում են իրար, երկրորդները՝ ընդհակառակը։ Անտագոնիստական հակասությունները հատուկ են մասնավոր սեփականատիրական կարգերին, պայմանավորված են հենց այդ կարգերի սոցիալական էությամբ, ոչ անտագոնիստական հակասությունները հատուկ են նաև սոցիալիստական կարգերին, որ գնալով նվազում են։ Երբ կլուծվեն մեր ժամանակաշրջանի արմատական պրոբլեմները, և սոցիալիզմը կդառնա համընդհանուր համաշխարհային սիստեմ, մարդկությունը չի իմանա այդքան բազմատիպ հակասություններ։

Լենինյան հայտնի ռևոլյուցիոներ, մարքսիստ-փիլիսոփա Ստեփան Թաղյանսկու փիլիսոփայական աշխատությունների գնահատմանն է նվիրված Զբիգնև Կուվշիկի (Լեհաստան) «Ստեփան Թաղյանսկու փիլիսոփայական աշխատությունների մասին» հոդվածը, իսկ Ս. Տ. Կոլրախչյանը այս համարում տպագրված իր հոդվածով վեր է լուծում բուհերի համար լույս տեսած դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասընթացի նոր ծրագիրը և դրական գնահատական տալիս նրան։

18-րդ դարի առաջադեմ մտածող, մատերիալիստ փիլիսոփա Ժան-Ժակ Ռուսսոյի ծննդյան 250-ամյակը նշանավորել է Ս. Ձ. Քեչեկյանը իր՝ «Ժ.-Ժ. Ռուսսոն — 18-րդ դարի ֆրանսիական մեծ լուսավորիչ» հոդվածով։ Հեղինակը Ռուսսոյի հայացքները պաշտպանելով բուրժուական ռեակցիոն կեղծ գիտության հարձակումներից, ճիշտ է գնահատում նրա մտավոր ժառանգությունը և տալիս է Ռուսսոյի գրչի արտադրանքի կատարած մեծ դերը Ֆրանսիայում բուրժուական ռևոլյուցիայի նախապատրաստման գործում։ Ռուսսոյի մշակած բոլոր սկզբունքները հասարակական կյանքում չիրագործվեցին, չէին էլ կարող իրագործվել։ Նա կոչ էր անում իրականացնել ժողովրդի լրիվ իշխանությունը՝ քաղաքական կյանքում, ուզում էր հասարակության մեջ կտրել հարուստների հարությունը. դրանք մնացին որպես մեծ լուսավորչի լավագույն ցանկություններ, բայց դրա համար է, որ նրա հիշատակը երախտագիտությամբ են հիշում նրանք, ում համար թանկ են դեմոկրատիայի և սոցիալիզմի գաղափարները։

Այս տարվա մայիսի 8-ից մինչև 11-ը Մոսկվայում տեղի ունեցավ բարձր ներվային համակարգության ֆիզիոլոգիայի և հոգեբանության փիլիսոփայական հարցերին նվիրված համամիութենական խորհրդակցություն, որը հրավիրել էին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան, ՍՍՌՄ Բժշկական գիտությունների ակադեմիան, ՌՍՖՍՌ-ի Մանկավարժական գիտությունների ակադեմիան, ինչպես և ՍՍՌՄ-ի և ՌՍՖՍՌ-ի Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությունների մինիստրությունները։ Ամսագիրը հրատարակել է այդ խորհրդակցության մասին տեղեկանք, Պ. Ն. Ֆեդոսեևի ներածական խոսքը և ակադեմիկոս Մ. Բ. Միտինի՝ «Նյութականը և իդեալականը», Ե. Վ. Շորոխովայի, Վ. Մ. Կաղանովի՝ «Հոգեբանության մի քանի փիլիսոփայական հարցեր», Պ. Կ. Անոխինի՝ «Իրականության կանխարտացոլումը», Ֆ. Բ. Բասսինի՝ «Անգիտակցականության պրոբլեմի մասին» հոդվածները, որոնք գրված են խորհրդակցությունում նրանց կարդացած զեկուցումների հիման վրա։

«Փիլիսոփայությունը ուսումնասիրողների համար» խորագրի տակ ամսագիրը զետեղել է իր ընթերցողներից մեկի՝ «Կարելի՞ է հասնել սոցիալիզմին առանց գիտական թեորիայի» հարցի պատասխանը, որի հեղինակն է Ի. Ի. Վորոշիլինը։ Այս հարցում մարքսիզմ-լենինիզմ ուսումնասիրողներին շփոթության մեջ է գցում Ստալինի այն ասույթը, թե տարերային բանվորական շարժումը առանց սոցիալ-դեմոկրատիայի և առանց նրա մեջ սոցիալիստական գիտակցականություն մտցնելու ևս կհասնի վերջնական նպատակին, չնայած այդպիսի ուղին համեմատաբար երկար ու տանջալից է։ Սոցիալիստական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինը դեռ շատ վաղուց բազմաթիվ առիթներով ընդգծել է, որ առանց գիտական թեորիայի բանվորական շարժումը կգնա միայն տրեդյունիոնիզմի ուղիով, կընկնի բուրժուազիայի ծուղակը։ Ուրեմն, շեշտում է հեղինակը, Ստալինի այդ դրույթը սխալ է և վաղուց մերժված բանվորական շարժման պրակտիկայով։

«Փիլիսոփայական դիտողություններ և նամակներ» բաժնում լույս է տեսել Յու. Բ. Մոլ-

չանովի. Ի. Բ. Նովիկի «Պատասխան պրոֆ. Վենացլի «Առարկությանը» նամակը, «Վոպրոսի ֆիլոսոֆիի» ամսագրի 1960 թ. № 11-ում հրապարակվել է Յու. Բ Մոլչանովի և Ի. Բ. Նովիկի՝ «Ժամանակակից բնագիտության բիոլոգիական ինտերպրետացիայի դեմ» հոդվածը: Արևմտյան Գերմանիայում այդ հոդվածից արտատպել են հատվածներ և փիլիսոփայական քննադատական ռեալիզմի մի խոշոր ներկայացուցչի՝ Ալոիզ Վենացլի «Առարկությունը» այդ հոդվածին: Վենացլին կոպիտ սխալներ է թույլ տվել իր «Առարկության» մեջ, որի մասին իրենց նամակում խոսում են հեղինակները:

Ամսագրի «Գիտական կյանք» բաժնում տպագրված են նյութեր բարձր ներվային համակարգության ֆիզիոլոգիայի և հոգեբանության փիլիսոփայական հարցերին նվիրված Մոսկվայի խորհրդակցությունից, և այլ նյութեր ու դիտողություններ:

«Գրախոսություն և քննադատություն» բաժնում ամփոփված են Ֆրանսիայում մարքսիստական փիլիսոփայության պրոբլեմների շուրջը տեղի ունեցած դիսկուսիայի արդյունքները և տպագրված են կարծիքներ փիլիսոփայական մի քանի աշխատությունների մասին:

Ամսագիրը եզրափակում են փիլիսոփայության հարցերին նվիրված նոր հրատարակված գրքերի ցանկը և ամփոփումը՝ անգլերեն լեզվով:

Ս. ԱՍՐՅԱՆ

# Вопросы истории

Ամսագրի 6-րդ համարի առաջնորդող հոդվածը նվիրված է ՍՍՀՄ-ի բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրությանը:

Բոլոր երկրների մարքսիստ պատմաբանների վեհ խնդիրն է ուսումնասիրել և ցույց տալ մեր դարաշրջանի կենտրոնական ուժը դարձած բանվոր դասակարգի պատմությունը: Սովետական պատմագիտության համար առանձնապես կարևոր է ՍՍՀՄ-ի բանվոր դասակարգի հետհոկտեմբերյան շրջանի պատմության ստեղծումը: Սովետական պատմաբանները պետք է ստեղծեն հաղթանակած պրոլետարիատի պատմությունը, այն պրոլետարիատի, որը Ն. Ս. Խրուշչովի պատկերավոր արտահայտությամբ դարձել է «նորին մեծություն» բանվոր դասակարգ:

Սովետական բանվոր դասակարգի պատմությունը առանձնահատուկ հետաքրքրության առարկա է ամբողջ աշխարհի բանվորների համար, որոնք ուզում են և պետք է իմանան, թե ՍՍՀՄ-ի պրոլետարիատը ինչ կերպ հասավ իր համաշխարհային պատմական հաղթանակներին, ինչ ուղիներով է նա ընթացել և շարունակում է առաջ ընթանալ: Միջազգային պրոլետարիատը իր ապագան տեսնում է մեր երկրի պատմության հայելու մեջ:

Այնուհետև հոդվածում խոսվում է բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրությանը Ստալինի անձի պաշտամունքի հասցրած վնասի մասին: Ժողովրդի պատմական դերի նսեմացումը չէր կարող չազդել աշխատավոր զանգվածների նաև պատմության ուսումնասիրության վրա: Չէ՞ որ անհատի պաշտամունքի եռուն շրջանում էր, որ պատմական բեմահարթակից փաստորեն վերացան բանվոր դասակարգի և գյուղացիության պատմության ուսումնասիրության պրոբլեմները: Ստալինի սխալ դրույթների ազդեցության տակ բանվոր դասակարգի պատմության ամբողջ շրջաններ լուսաբանվեցին խեղաթյուրված կերպով: Օրինակ, առաջին հնգամյակների տարիներին աշխատանքի և արտադրության կազմակերպման ու պլանավորման շատ թերություններ վերագրվեցին վնասարարության: Առաջնորդողում միաժամանակ նշվում է, որ վերջին տարիներս նկատելիորեն աշխուժացել են բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրության աշխատանքները: Անդրադառնալով այդ ուղղությամբ միութենական ռեսպուբլիկաներում կատարվող աշխատանքին, հիշատակվում է նաև, որ Հայաստանում աշխատանքներ են կատարվում «Հայկական ՍՍՌ-ի ինդուստրացման պատմություն» փաստաթղթերի ժողովածուն և «Հայաստանի բանվոր դասակարգի աճումն ու զարգացումը (1938—1960 թթ.)» մենագրություն ստեղծելու համար:

Է. Մ. Գորփմեսն Աշխատանքի և պաշտպանության խորհրդի կողմից տեղական հիմնարկներին ուղղված լենինյան «Նակազին» նվիրված հոդվածում համառոտակի կանգ է առել «Նակազի» մշակման պատմության վրա, ցույց տալով անձամբ Վ. Ի. Լենինի կատարած մեծ դերը այդ «Նակազի» մշակման և իրականացման գործում: Հոդվածագիրը ուշադրությունը գլխավորապես կենտրոնացրել է այն հարցի վրա, թե ինչպես է կենսագործվել «Նակազի» հիմնական գաղափարներից մեկը՝ տեղական տնտեսական խորհրդակցությունների պարբերական հաշվետվությունների կազմակերպումը:

Գ. Վ. Վոլորցեր «Ժամանակավոր կառավարության հակարանվորական քաղաքականությունը» հոդվածում փորձել է լուսաբանել 1917 թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին բանվորական վերահսկողության դեմ բուրժուազիայի և ժամանակավոր կառավարության պայքարի նպատակները, հիմնական էտապները ու միջոցները:

Ռուսաստանի ռազմական պատմության մասնագետ Գ. Ա. Ֆիլիպը 1812 թ. Հայրենական պատերազմի պատմության ուսումնասիրությանը նվիրված հոդվածում փորձել է համառոտակի բնութագրել այն աշխատանքները, որ պատմաբանները կատարել են 1812 թ. պատերազմի հետազոտության ուղղությամբ: Հոդվածում նշված է, որ մեր գրականության մեջ անհամեմատ քիչ ուշադրության է արժանացել 1812 թ. պատերազմի սկզբնական շրջանը: Մինչդեռ պատերազմի հենց առաջին չարաքներին տեղի ունեցան առավել դրամատիկ իրադարձությունները, որոնք շատ բանով կանխորոշեցին պատերազմի հետագա ընթացքը: Մինչև օրս, դժբախտաբար, դեռևս չկան նաև այնպիսի աշխատություններ, որտեղ հետևողականորեն և հանգամանորեն չարադրված լինեին այն ռազմական ու քաղաքական իրադարձությունները, որոնք Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցան Ռուսաստանում Նապոլեոնի բանակի չախջախումից հետո, լուսաբանվեր ռուսական բանակի դերը Նապոլեոնի լծից Արևմտյան Եվրոպայի երկրների ազատագրման գործում: Հոդվածի վերջում հեղինակը փորձում է լուսաբանել այն դիրքավորումը, որ ռուսաց Բրամանատարությունը գրավել էր ռուսական տերիտորիաները ազատագրելուց հետո պատերազմը չարունակելու հարցում:

Պատմական գիտությունների թեկնածուներ Բախը, Կունինեանը և Տարտակովսկին հանդես են եկել այսպես կոչված «Սոցիալիստական ինտերնացիոնալի» ակտիվ գործիչներից մեկի, երա նախկին քարտուղար Ցուլիուս Բրաունթալի ոչֆորմիստական կոնցեպցիայի դեմ, որը վերջերս հրապարակ է հանել առաջին և երկրորդ ինտերնացիոնալների պատմությանը նվիրված իր կեղծ գիտական հորինվածքի առաջին հատորը:

Ամսագրի այս համարում երապարակված են նաև Զ. Ս. Բլոուսովայի հոդվածը 1935 թ. ֆրանս-սովետական պայմանագրի պատմության մասին, Ն. Ռ. Պիգուլևսկայայի հոդվածը Մերձավոր Արևելքում ֆեոդալիզմի ծագման ու զարգացման պրոբլեմների մասին, գիտական կյանքի խրոնիկա, գրախոսություններ և այլ նյութեր:

# История СССР

Երկամյա հանդեսի 3-րդ համարում զետեղված՝ «Սովետական Միության պայքարը ընդդեմ ֆաշիստական ագրեսիայի. հանուն կոլեկտիվ անվտանգության՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին» վերնագրով հոդվածում Ի. Պ. Կորլյակովը, հենվելով նոր, դեռևս չհրապարակված փաստաթղթերի ու նյութերի վրա, որոնք վերցված են ՍՍՌՄ-ի արտգործմինիստրության արխիվից, ինչպես նաև օգտագործելով Գերմանիայում գտնվող արխիվները, ցցել է ցույց տալ Սովետական Միության արտաքին քաղաքականությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, երա անդուլ ջանքերը ֆաշիստական ագրեսորների համար կոլեկտիվ հակահարված կազմակերպելու գործում: Հոդվածագիրը հենության առարկա է դարձրել հետևյալ հարցերը. ա) Նոյեմբերյան հակաֆաշիստական քաղաքական հգնաժամի հասունացումը Եվրոպայում, բ) ՍՍՌՄ-ը ընդդեմ Մյունխենյան գործարքի, գ) ՍՍՌՄ-ի պայքարը արևմտյան տերությունների հետ փոխադարձ օգնության պակտ կնքելու համար, դ) Մոսկվայի Անգլո-ֆրանս-սովետական ռազմական բանակցությունները 1939 թվականին և դրանց վիժեցումը արևմտյան տերությունների կողմից: Ե) Սովետա-գերմանական 1939 թվականի պայմանագիրը միակ միջոցն էր հակասովետական միացյալ ճակատի ստեղծումը կանխելու և ՍՍՌՄ-ի խաղաղ դադարը երկարացնելու համար:

Վիճակագրական հարուստ տվյալներ է պարունակում Մ. Ս. Զունուսովի հոդվածը, որի վերնագիրն է՝ «Սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման ընթացքում սովետական ազգերի մերձեցման պրոցեսի բնութագրության շուրջը»:

— Դժվար է մատնանշել սովետական մի որևիցե ուրիշ պատմաբանի, որի հոչակը կարդանար մրցել այն արտակարգ մեծ ժողովրդականության հետ, որ կենդանության օրոք վայելում էր Մ. Ն. Պոկրովսկին: Պակաս դժվարին չէ նաև մատնանշել սովետական պատմագրության մի այնպիսի ներկայացուցչի, որի գիտական գործունեությունը արժանացած լիներ այնքա՞ն հակասական գնահատականի, ասված է Մ. Ե. Նայդենովի՝ սովետական պատմագրության մեջ Պոկրովսկու դերին նվիրված հոդվածում:

Մենք կարող ենք,— ասում է հոդվածագիրը,— հենվելով փաստերի օբյեկտիվ վերլուծության վրա, լիակատար վստահությամբ հայտարարել, որ Պոկրովսկին աչքի ընկնող դեր է խաղացել սովետական պատմագրության զարգացման գործում, որպես նրա տաղանդավոր սկզբնավորողներից մեկը: Սովետական պատմագիտությունը նրան պարտական է իր շատ հաջողություններով, որոնք ձեռք են բերվել առավել դժվարին առաջին տասնամյակի ընթացքում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ամբողջ ուժով ընդգծել, որ կոպիտ սխալ թույլ կտար նա, ով Պոկրովսկու բարի անվան վերականգնումը, որ անարժան կերպով արատավորվեց քառորդ դար առաջ, կընկալեր որպես վերադարձ դեպի նրա պատմական կոնցեպցիան: Այդ մասին խոսք անգամ չի կարող լինել:

«Դարձյալ ռևոլյուցիոն դեմոկրատների և նարոդնիկների մասին» վերնագրով հոդվածում Վ. Վ. Շիրոկովան քննադատական դիտողություններ է արել հանդեսի անցյալ տարվա 5-րդ համարում Իոնովայի և Սմիրնովի հրապարակած «Ռևոլյուցիոն դեմոկրատները և նարոդնիկները» հոդվածի առթիվ: Նա գրում է, նարոդնիկության մասին վերջին գրքերի ու հոդվածների վերաբերյալ Իոնովայի և Սմիրնովի քննադատական դիտողությունները հիմնազուրկ են: Այդ աշխատությունների մեջ նարոդնիկների իդեալականացման ոչ մի նշան չկա: 70-ական թվականների ռևոլյուցիոներների վաստակի ճանաչումը, նրանց ռևոլյուցիոն դեմոկրատ անվանելը իդեալականացում չեն: Իոնովայի և Սմիրնովի հոդվածը մեր կարծիքով շատ բանով խճճում է հարցերը: Այն կարող է հանգեցնել նոր կրկնության՝ 70-ական թվականների ռևոլյուցիոներների թերագնահատման:

Ինդովան, Պրեոբրաժենսկին և Տիխոնովը «Գյուղացիության բուրժուական շերտավորումը Ռուսաստանում 17—18-րդ դդ.» հոդվածում, ելնելով Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման լենինյան կոնցեպցիայից, պնդում են, որ 17—18-րդ դդ. ռուսական, ինչպես արհեստագործական, այնպես էլ հողագործական գյուղը անմիջական մասնակցություն է ունեցել երկրում կապիտալիստական հարաբերությունների սկզբնավորման պրոցեսում: Նախառեֆորմյան գյուղը ոչ միայն կրել է զարգացող կապիտալիստական արդյունաբերության. այլև ինքը նույնպես ունեցել է ռուսաց պատմության նոր շրջանին բնորոշ սոցիալ-տնտեսական տեղաշարժեր: Դրա շնորհիվ գյուղացիությունը աղբյուր է հանդիսացել ապագայի բուրժուական հասարակության հիմնական դասակարգերի ձևավորման պրոցեսում:

Սովետական պատմաբանների ստեղծագործական փորձը բաժնում Բ. Բ. Կաֆենգաուզը պատմում է դիսերտացիաների վրա իր կատարած աշխատանքների մասին: Հաղորդումներ բաժնում զետեղված է Ա. Վ. Դրուզինայի հոդվածը 1942 թ. հիտլերյան զավթիչների դեմ կաբարդա-բալկարական պարտիզանների պայքարի մասին: Հեղինակը նկարագրված դեպքերի ակտիվ մասնակիցներից մեկն է: Քննադատություն և գրախոսություն բաժնում տպագրված է 11—15-րդ դդ. ֆեոդալական Ռուսիայի մասին Ի. Ի. Սմիրնովի դիտողությունների շարունակությունը:

Ի. Ն. Բոնդարենկոյի «Կիևի բոլշևիկները առաջին ռուսական ռևոլյուցիայում» աշխատության մասին Դեռենկովսկու գրախոսության մեջ նշված է, որ այդ աշխատությունը գրված է հապճեպորեն, գիտական ցածր մակարդակով. ունի աններելի թերություններ ու սխալներ, որ այդ գիրքը խեղաթյուրված է լուսաբանել էական հարցերը:

ՍՍՍՄ-ի պատմությունը արտասահմանում բաժնում հրապարակված են Ռ. Մ. Իլյուխինայի «Սովետական հասարակության պատմության հարցերը ամերիկյան հանդեսի էջերում» և Դ. Ա. Նեկրասովի «Պ-րն Բ. Սիգրանի պատմական էքսկուրսները դեպի 18-րդ դարի ռուս-շվեդական հարաբերությունները և պատմության իրական փաստերը» ծավալուն հոդվածները:

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## Вопросы ЛИТЕРАТУРЫ

Ժամանակակից գրականության հրատապ հարցերը լայն տեղ են գտել «Վոպրոսի լիտերատուրի» ամսագրի 4-րդ համարում: Ամսագրի «Ժամանակակից թեմաների շուրջը» բաժնում տեղավորված է Ն. Իգնատևայի՝ «Դրամատուրգիական տարի» հոդվածը, որտեղ քննադատը վեր է լուծում անցած տարվա ընթացքում հրապարակ եկած մի շարք պիեսներ: Նույն բաժնում տպագրվել են նաև Ա. Կոզանի՝ «Ազատագրվել սխեմաներից» պոլեմիկական նյութերը: Ամսագրի այս հոդվածները գրականության, դրամատուրգիայի հարցերը վեր են լուծում պարտիայի XXII համագումարի, անհատի

պաշտամունքի վնասակար հետևանքների վերացման լույսի տակ:

«Դրամատուրգիական տարի» հոդվածում ցույց է տրվում, որ հակառակ նախորդ տարիների, այժմ պիեսների ենթադրվող մեծամասնությունը մեր օրերի մասին է, ժամանակակից, շարքային մարդկանց մասին: Ի տարբերություն 40-ական թվականների և 50-ական թվականների սկզբի դրամատուրգիայի, վերջին տարիների հաջողված պիեսներում գնալով ուժեղանում է հետաքրքրությունը մարդու, նրա հոգեկան աշխարհի, նրա ապրումների ու մտածելակերպի հկատմամբ: Դա բնական է, քանի որ վերջին տարիների ընթացքում և հատկապես XX համագումարից հետո մարդիկ սկսեցին ազատագրվել անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում տիրող պատկերացումներից ու մտածելակերպից, սկսեցին ինքնուրույնաբար գրել այս կամ այն երևույթի մասին: Այստեղից էլ դրամատուրգների տեղաշարժը դեպի մարդն ու նրա ներքնաշխարհը:

Նշելով Ա. Շտեյնի «Օվկիանոսը», Ն. Պոգոդինի «Բնական ծաղիկները», Ա. Լևադայի «Ֆաուստը և մահը», Կ. Սիմոնովի «Զորբորդը» պիեսներում արտահայտված ստեղծագործական այդպիսի որոնումների դրական կողմը, հեղինակը անհանգստություն է հայտնում այն առթիվ, որ անցած տարվա պիեսներում ամենուրեք հանդիպում են նույնանման բախումներ, կոնֆլիկտներ և նույնիսկ համանման գործող անձինք, հանգամանքներ, որոնք, ըստ էության, անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում իշխող մտածելակերպի, պատկերացումների, ստեղծագործական ձևերի փոխակերպված արտահայտություններն են:

Այդ ոճդիվների վերացման անհրաժեշտությանն ու գրական մյուս պրոբլեմներին են նվիրված Ա. Կոգանի՝ «Ազատագրվել սխեմաներից» պոլեմիկական նոթերը: Գաղափարական կյանքի շատ երևույթներ համարձակորեն պետք է վերաիմաստավորվեն լենինյան դիրքերից, ասում է հեղինակը, այդ է պահանջում պարտիայի XXII համագումարը, մեր ժամանակաշրջանը: Մինչդեռ գրականության մեջ երբեմն-երբեմն իրենց զգացնել են տալիս դոգմատիկ մտածելակերպի ոճդիվիները: Այդ կապակցությամբ նա վիճարկում է Վ. Միխայլովի անսակետը տիպականության մասին («Ստեղծագործական օրինաչափությունների որոնումներ»,— «Սիբիրսկիե օգնի», 1960 թ. № 11—12): Կոգանը քննադատում է տիպականության հարցի վերաբերյալ դեռևս ցուցաբերվող միջին դվարանական մոտեցումը, ինչպես նաև գրականության մեջ երևացող շտամպը, սխեմատիզմը, ցանկալին իրականությունը համարելը, ոչ նշմարտացիությունը:

«Դրական քննադատության կյանքը» խորագրի տակ տպագրված է Մուխամեդյան Կարապետի «Պարտավորություններ ընթերցողի և գրողի առջև» հոդվածը, որտեղ հեղինակը խոսում է դպրոցական գրականության և այդ կապակցությամբ նաև գրականության այլևայլ հարցերի մասին:

Վ. Տուրբինի «Ընկեր ժամանակ և ընկեր արվեստ» տեսական աշխատությանն է նվիրված «Գրականության տեսություն» բաժնում տեղադրված Ս. Բոչարովի, Վ. Կոժինովի, Գ. Պոլիևսկու «Մարդը դուրս է մղված» հոդվածը: Հեղինակները չժխտելով Վ. Տուրբինի գրքի արժեքավոր գաղափարները, միաժամանակ առարկում ու մերժում են նրա բնգերը արվեստի տարբեր հարցերի վերաբերյալ:

«Գրականության պատմություն» բաժնում հրատարակված է Վ. Գուտինցևի «Գերցենի ժառանգության ուսումնասիրման հարցերը» հոդվածը: Գերցենին նվիրված վերջին աշխատությունների նյութերի հիման վրա հեղինակը ընթերցողներին ուշադրությունն է հրավիրում գերցենագիտության հաջող զարգացման համար կարևոր մի քանի խնդիրների վրա՝ կապված հիմնականում գրողի գրական գործունեության ուսումնասիրման հետ:

Շչեդրինի դրամատուրգիական վարպետության հարցերն են պարզաբանված Լ. Լիվշիցի՝ նույն բաժնում տեղադրված «Շչեդրին-դրամատուրգի վարպետությունը» հոդվածում:

Գեռևս 1959 թ. «Վոպրոսի լիտերատուրի» ամսագրի 8-րդ համարում տպագրվել է Ա. Անիքստի՝ Շեքսպիրի մասին գրված առաջին հոդվածը: Այս համարում «Արտասահմանյան գրականություն» բաժնում նույն ցիկլից տպվել է «Ո՞վ է գրել Շեքսպիրի պիեսները» հոդվածը:

«Արտասահմանյան մամուլի էջերից» խորագրի տակ տպագրված են բազմաթիվ նյութեր:

Հարուստ նյութեր է պարունակում «Գրողի վարպետությունը» բաժինը, ուր տեղ են գտել Լեոնիդ Բորիսովի «Փաստաբուղթ, երևակայություն, ենթադրություն» հոդվածը, Վ. Կորոլենկոյի նամակները, «Նամակներ երիտասարդ գրականագետներին», Զ. Բլիսկովսկու «Վերնագրի որոնումը» հոդվածը և այլն:

Ամսագրում կան գրքերի, ամսագրերի վերաբերյալ բազմաթիվ տեսություններ ու գրախոսություններ, ինչպես նաև ինֆորմացիաներ և այլ նյութեր:

Դ. ՄԱՔԵԼՈՍՅԱՆ